

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-866-15.02.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ Կառավարություն	«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերնագիր	Նախագծի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը:	Ընդունվել է:  Վերնագրում կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
2.	ՀՀ Կառավարություն	«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության	«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասն ամբողջությամբ շարադրել նոր խմբագրությամբ՝ նկատի ունենալով	Ընդունվել է:  Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

		օրենքում փոփոխություն կատարելու մասին» «Օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված	դրանում առաջարկվող փոփոխությունների մեծ ծավալը:		
3.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ, 6-րդ և 7-րդ մասեր	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ, 6-րդ և 7-րդ մասերում «խմբագրությամբ» բառը փոխարինել «բովանդակությամբ» բառով: Բացի այդ՝ անհրաժեշտ է 6-րդ մասը «կետերով» բառից հետո լրացնել «հետևյալ» բառով:	Ընդունվել է:  Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
4.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասին:	Ընդունվել է:  Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
5.	ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծով նախատեսել նաեւ օրենքի ուժով վարձակալության իրավունքի դադարեցում պայմանագրի գործողության ժամկետը օրենքով սահմանված պայմանագրի առավելագույն ժամկետն ավարտվելու հիմքով առանց կողմերից որեւէ մեկի դիմումի, քանի որ որոշ գույքերի եւ գույքային իրավունքների մասով օրենքով սահմանված են տրամադրման առավելագույն ժամկետներ:	Ընդունվել է:  Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			Միեւնույն ժամանակ առաջարկվել է օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետով. «3) օրենքի ուժով դադարող իրավունքի պետական գրանցման համար վճար չի գանձվում:»:		
6.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ կետեր	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերում «պայմանագիրը համապատասխան պայմանների պահպանված լինելու դեպքում ճանաչվում է վերսկսված» բառերը փոխարինել «պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով» բառերով՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
7.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 6-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 6-րդ կետի «գ» ենթակետում առաջարկվող այն դրույթը, ըստ որի՝ օրենքով կամ պայմանագրով նախատեսված՝ պայմանագրից հրաժարվելու ծանուցման մասին փաստը հաստատող փաստաթղթի հիման վրա պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում պայմանագրի կողմերից որեւէ մեկի դիմումով կատարվում է պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի դադարման պետական գրանցում, պետք է դիտարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածի կարգավորման համատեքստում: Այսինքն՝ ծանուցման փաստը հաստատող փաստաթղթի հիման վրա համապատասխան	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			պետական գրանցումը կատարվում է, եթե լրացել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածում սահմանված ժամկետները: Ուստի հստակության համար առաջարկվել է նախագծի 1-ին հոդվածի 6-րդ կետի «գ» ենթակետը «հրաժարվելու» բառից հետո լրացնել «պատշաճ» բառով:		
8.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ, 6-րդ եւ 7-րդ մասերով՝ «5. Սույն հոդվածի իմաստով օրենքով նախատեսված պատշաճ ծանուցում է համարվում այն ծանուցումը, որը կատարվել է առձեռն փոխանցմամբ կամ պատվիրված նամակով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ օրենքով սահմանված հրապարակային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցումը տեղադրելու միջոցով, որի դեպքում 15-րդ օրն անձը համարվում է ծանուցված: 6. Սույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «գ» ենթակետով սահմանված պատշաճ ծանուցման մասին փաստը հաստատող փաստաթուղթ է համարվում՝ 1) առձեռն փոխանցմամբ ծանուցման դեպքում՝ ծանուցվողի ստորագրությամբ կատարված նշումով ծանուցման պատճենը. 2) պատվիրված նամակով ծանուցման դեպքում՝ ծանուցման պատճենը եւ ծանուցումը հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը. 3) օրենքով սահմանված	Ընդունվել է:  Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			<p>հրապարակային եղանակով ծանուցման դեպքում՝ պատվիրված նամակի հետադարձ ծանուցումը եւ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցումը տեղադրելու քաղվածքը: Սույն հոդվածի ծանուցման նկատմամբ չեն տարածվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 330.1-ին հոդվածի 5-րդ մասի դրույթները:</p> <p>7. Սույն օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված մերժման հիմքերից բացի՝ իրավունքի դադարման պետական գրանցումը մերժվում է նաեւ, եթե իրավունքի դադարման պետական գրանցման դիմումը ներկայացնելու պահին չի լրացել օրենքով կամ պայմանագրով նախատեսված ծանուցման ժամկետը:»:</p>		
--	--	--	---	--	--